



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳԵՂՅԱՆ

# ԽՈՐԱՄԱՆԿ ԱԶԳԱՐ-ԿՈՍԷ

894.342 Տ  
Խ-81

ԳԵՂՅԱՆ

30 MAY 2011

394.3420

Խ- 81 ա

# Խ Ո Ր Ա Մ Ա Ն Կ Ա Լ Դ Ա Ր - Կ Ո Ս Ը

ՂԱԶԱԽԱԿԱՆ ՇԵՔՅԱԹ

Թարգմ. Տ. ԽՈԶԱՅԱՆ

Նկարները Պ. ԶԵՐԴԱՆՑԵՎԻ



Հ Ա Յ Պ Ե Տ Շ Ր Ա Տ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՑԵՐԵՎԱՆ

1940

13 05. 2013

Պատ. խմբագիր՝ Ա. Հ ա յ ր յ ա ն  
Տեխ. խմբագիր՝ Ա. Կ ա ս ա ղ ա ը յ ա ն  
Սրբագրիչ՝ Ա. Փ ա ր ս ա ղ ա ն յ ա ն

13443



### ԽՈՐԱՄԱՆԿ Ա.ԼԴԱՐ-ԿՈՍԸ

Տափաստանում ապրում եր մի մարդ,  
անունը՝ Ալդար-Կոս:

Աշխարհում նրանից խորամանկ մարդ չը-  
կար: Յուրդերում նրա մասին ասում էին.  
— Գուցե սձր միայն կարող ե խաբել  
Ալդար-Կոսին:

Նույն այդ տափաստանում քոչվորական  
կյանքով ապրում եր Չիկ-Բիրմեսս բայր, վո-  
րի մասին ասում էին՝ «մարդու մի կաթիլ  
ջուր չի տա»: Դազախական տափաստանում  
նրանից ժլատ մարդ չկար: Մարդիկ յերբ  
խիստ քաղցած էին լինում, ասում էին՝  
«կարծես Բիրմեսսի մոտ հյուր յեղած լի-  
նեմ»:



1753  
40

Казахская сказка  
ХИТРЕЦ АЛДАР-КОС

Гиз. Арм. ССР, Ереван, 1940 г.

Քլափլիտի լիպոր՝ Զ—1031. Հրատ. 5098.

Պատկեր 933. Տիրած 3300.

Քուղթ 62x94. Տղազրական 1/4 մամ.

Մեկ մամուրում 24.480 նիշ.

Հանձնված ե արտադրության 28 դեկտեմբերի 1939 թ.

Ստորագրված ե տպագրության համար 8 հունվարի 1940 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65.

Ալգար-Կոսը սկսեց Բիրմեսի մոտ հյուր  
գնալու պատրաստութիւն տեսնել:

Մարդիկ ծիծաղում էին և ասում.

— Շան մորթուց տուն ձեւել չես կարող,  
Բիրմեսից՝ թան խմել:

— Զեկսի\*) — աչքով անելով պատասխա-  
նեց Ալգար-Կոսը:

Յե՛վ ճանապարհ ընկավ ժլատ բայի մոտ:

Յերկար գնաց նա: Բիրմես բայը տա-  
փաստանի խորքերն էր հեռացել: Ժլատն իր  
վրանը տեղավորել էր յեղեգնուտի մեջ և  
վոչ միայն ձիավորը, այլ նույնիսկ նապաս-  
տակը չէր կարող առանց աղմուկի մոտենալ  
նրան:

Սակայն, յեթե Բիրմեսը ժլատ էր, Ալ-  
գար-Կոսն էլ խորամանկ էր: Նա ձին թողեց  
զաշտում, իսկ ինքը փորսոզ տալով կամա-  
ցուկ մոտեցավ վրանին և սկսեց քար պցել  
յեղեգնուտը:

Սկզբում աղմուկի վրա մարդիկ սկսեցին  
դուրս նայել վրանից, բայց հետո դադարե-  
ցին:

«Յերևի քամին է աղմկում» — մտածեցին  
նրանք:

\*) Զեկսի — լավ:

Այն ժամանակ Ալգար-Կոսը մոտեցավ  
վրանին և ձեղրից ներս նայեց:

Հարուստ վրան է: Մնուկներ են շար-  
ված, բոլորը թիթեղով պատած և ծածկված  
ձեռագործ թաղիքե չեխտիների մեջ:

Փափուկ բարձերին գույնզգույն յերես-  
ներ են հազցրված: Վրանն սպիտակ թաղի-  
քով է պատած:

Վրանի տերը՝ Բիրմեսը կրակի մոտ նստած  
յերշիկ էր սլափափախում: Նրա կինը լավաշի  
խմոր էր հունցում: Աղջիկը հավ էր փետ-  
րում: Ծառան վոշխարի գլուխ էր մաքրում:

Ալգար-Կոսը բոլորը տեսավ, ժպտաց և  
վրանը մտավ: Բայց նա դեռ չէր ել բարևել,  
յերբ արդեն վրանի տերերը բոլորը, ինչ ձեռք-  
ներին ունեյին, թազցրին:

— Ի՞նչ նորութիւն կա, — հարցրեց Բիր-  
մեսը հյուրին:

— Աշխարհում նոր բան չատ կա, — ժպտա-  
լով ասաց Ալգար-Կոսը, — սակայն յես կպատ-  
մեմ վերջին նորութիւնը: Այստեղ գալիս  
ճանապարհին յես մեծ ոճի հանդիպեցի, վոր  
քո թազցրած յերշիկից բարակ չէր լինի:  
Յես մի քար վերցրի, վոր փոքր չէր լինի  
այն վոշխարի գլխից, վոր մաքրում էր քո

ծառան և նրանով խփեցի ուձին: Նա հարվածից տափակեց և նմանվեց այն լավաշին, վոր ձեր կինը ուզում ե թխել լամորից: Յեթե այդ ճիշտ չե, ապա թող ձեր աղջիկը ինձ փետրի այնպես, ինչպես նա փետրում եր հավր:

— Այ, ա՛յ, — գլուխն որորեց Բիրմեսը, — բայց և այնպես չեր մտածում հյուրին հյուրասիրել:

Յերկար ժամանակ հյուրն ու վրանի տերը նստած ձխամորճ ելին ձխում ու դատարկ խոսակցություններով զբաղվում: Իսկ վոչխարի միսը կաթսայի միջից այնքան անուշ եր բուրում, վոր Ալդար-Կոսի բերանի ջուրը գնում եր:

Բիրմեսը կաթսան խառնելով, ինքն իրեն ասում եր.

— Յեռա իմ կաթսա, կես տարի պիտի յեռաս:

Ալդար-Կոսը քնելու պատրաստություն տեսնելով, հանեց վոտնամանները և համապատասխան տոնով պատասխանեց.

— Հանգստացե՛ք, իմ վոտնամաններ, մինչև յեկող տարի:

«Նզովյալ հյուր» — մտածեց վրանի տերը:

— «Նզովյալ տանտեր», — մտածեց հյուրը:

Շուտով վրանում բոլորը պառկեցին քնելու: Ալդար-Կոսը տեղավորվեց կաթսայի մոտ: Բայց հնարավոր ե քաղցած քնել, այն ել մտով լի կաթսայի մոտ: Հյուրն սպասեց, մինչև բոլորը քնեցին, ապա կաթսայից դուրս հանեց վոչխարի միսը և կուշտ կերավ:

Բայց ի՞նչ անել — չե՞ վոր առավոտը վրանում բոլորն ել կզարթնեն և իսկույն կիմանան, վոր նա միսը կերել ե:

Սորամանկ Ալդար-Կոսն զգուշությամբ հանեց վրանի տիրոջ հին վոտնամանները, կտրատեց և գցեց կաթսայի մեջ:

Կուշտ Ալդար-Կոսը խոր քուն մտավ: Բիրմեսն արևից ել շուտ վեր կացավ ու նայեց հյուրին: Ալդար-Կոսը քնի մեջ ժրպտում եր:

«Ծիծաղիր ինչքան քեֆդ ուզի, իսկ մենք միսը կուտենք», մտածեց բա՛լը և զարթեցրեց յուրայիններին: Սկսեցին ուտել: Ծամում են հա ծամում, ծնոտները ցավում են շատ ծամելուց, բայց միսը կտրել չի լինում:

— Անիծված հյուր, նրա պատճառով միսը չափից ավելի յե յեփվել ու չորացել ե, — ասաց վրանի տերը և կարգադրեց շներին առաջ ձգել:

Շները լիզեցին հին կաշին, և հեռացան:  
Յեկան ազոավները և վոտնամանի կտորները  
մաս-մաս տարան դաշտ:

Ապա Բիրմեսն ուզեց գնալ տափաստան:  
Կինը դզումից սլատրաստած փարչի մեջ թան  
ածեց:

Ալդար-Կոսը բայի գրպանում նկատելով  
թանի փարչը՝ մոտեցավ նրան և սկսեց զրկել:

Բային գրկում է, բայց միաժամանակ  
ծածուկ խցանն է հանում փարչից:

Յերբ թանը թափվեց բայի հագուստի  
վրա, նա փարչը գրպանից հանեց, տվեց Ալ-  
դար-Կոսին ու ասաց:

— Ա՛ռ, խմիր:

Նորից Ալդար-Կոսը կուշտ է, իսկ Բիր-  
մեսն ստիպված յեղավ քաղցած գնալ: Կուշտ  
Ալդար-Կոսին հաճելի յեր հարուստ վրանում  
լավ հանգստանար:

Այդ յերեկո Բիրմեսը կնոջը կամացուկ  
ասաց.

— Վաղն ինձ համար լավաշ թխիր, միայն  
թե առավոտը վաղ, վորպէսզի հյուրը չտեսնի:

Սակայն Ալդար-Կոսին խաբել դժվար է:  
Յերբ առավոտյան տան տերը տաք լա-  
վաշները ծոցը դրեց և ուզեց ճանապարհ

ընկնել, Ալդար-Կոսը վեր թռավ տեղից:  
— Դե, սիրելի բարեկամ, այսօր յես մը-  
տադիր եմ գնալ:

Հյուրը հրածեշտ է տալիս և ամուր գրկում  
է բային:

Բիրմեսը չղիմացավ և ամբողջ ձայնով  
բղավեց.

— Ո՛հ, վառում է:

Յեվ տաք լավաշները դուրս գցեց ծոցից:

Ալդար-Կոսը լավաշները կերավ և տան-  
տիկնոջը գովեց:

Ալդար-Կոսը յերկար ժամանակ հյուր մնաց  
ժլատին: Բիրմեսը հայհոյում էր, բայց ա-  
կամայից կերակրում էր հյուրին:

Ալդար-Կոսը ճակատին սպիտակ նշանով  
մի ձի ունեւր:

Նա նկատեց, վոր բայն ավելի ու ավե-  
լի յե բարկանում և հաճախ նայում է իր  
ձիուն:

Այն ժամանակ Ալդար-Կոսն իր ձիու ճա-  
կատի սպիտակ տեղը ցելս քսեց, իսկ բայի  
ձիու ճակատին իր ձիու սպիտակ նշանի նման  
մի նշան արեց սպիտակ կավով:

Գիշերը Բիրմեսը գնաց սպիտակ նշանով  
ձին սպանեց և կանչեց հյուրին.

—Ո՛հ, Ալդար-Կոս, քո ձիու հետ դժբախտութիւնն ե պատահել:

Ալդար-Կոսը վրանից դուրս չգալով, հանգիստ պատասխանեց.

— Մորթիր, միսը կեփենք:

Միայն առաժոտը Բիրմեսը գլխի ընկալ, վոր իր ձեռքով սպանել ե իր սեփական ամենալավ նժույգը:


Սակայն, ի՛նչ արած: Մտիպված յեղան միսը յեփել: Խորամանկն իրեն չեր գրկում, լավագույն կտորներն եր ընտրում: Յերբ բայի ձիու միսը կերան, Ալդար-Կոսը վարձեց շարունակել ճանապարհը:

Բայց բայի աղջիկը՝ Բիգ-Բեկեշը նրան շատ եր դուր յեկել: Աղջկանը կրճատ Բիգեյին անվանում, իսկ զազախերեն բիգ նշանակում ե մախաթ: Խորամանկը նկատեց այդ և վորոշեց բային մի անգամ ևս խաբել:

Յե՛վ ահա, մի անգամ, յերբ Բիրմեսը հեծել եր ձին, Ալդար-Կոսը նրան ասաց.

— Դեհ, այսոր յես գնում եմ, միայն թե ինձ մի բիգ տվեք, վոտնամաններս պետք ե կարկատեմ:

— Լա՛վ, վերցրու—ասաց բայը և մեկնեց: Ալդար-Կոսը մտավ վրանը և Բիրմեսի կնոջն ասաց.



Ալդար-Կոսը գեղեցկուհի Բիգին նստացրեց ձիուն և էջեց տափաստանը:

— Այժմ յես ձեզնից հեռանում եմ, միայն  
թե ինձ հետ պետք է տանեմ Բիզ-Բեկեշին՝  
իմ հարսնացվին:

— Բայց ամուսինս Բիզին քեզ կտամ վոր:

— Այո, մենք արդեն նրա հետ պայմա-  
նավորվել ենք: Գնացեք և հարյրեր:

Վախեցած կինը շտապ դուրս յեկավ վրա-  
նից և հեռացող ամուսնու հետևից կանչեց.

— Միթե դու համաձայն ես Բիզը տալ:

— Տո՛ւր, տո՛ւր, — ձեռքով արավ ամուսինը,  
մի խնայիր, թե չէ՝ այդ խաբեբան մեզ բոլո-  
րովին կքայքայի: Ճամբու դիր հյուրին, գլու-  
խըդ ազատիր նրանից.

Աղջկանը զուգելով լաց ե լինում մայրը,  
բայց տափաստանի սովորության համաձայն,  
ամուսնուն չլսել, անկարող է:

Ալգար-Կոսը գեղեցկուհի Բիզին նստա-  
ցրեց ձիուն և քշեց տափաստանը:

Յերեկոյան բայ Բիրմեսը տուն վերա-  
գարձավ: Տեղեկանալով խորամանկի վեր-  
ջին արարքի մասին, նրան հետապնդել սկսեց:

Սակայն, հնարավոր է Ալգար-Կոսին գտնել  
տափաստանում, ուր նրան հայտնի յեն բոլոր  
ճանապարհները և ամեն յուրդում ծանոթներ  
ունի:

## Ա.Լ.Դ.Ա.Ր-ԿՈՍԻ ԱՐԱՐԻՆԵՐԸ

Ալգար-Կոսը տափաստանում գտավ վոչ-  
խարի մի կրծոտած թիակ:

Մտավ մի վրան: Տեսավ վոր կաթսայի  
մեջ մլիս ե յեփվում:

— Կարելի՞ յե, վոր յես ել նրա մեջ գցեմ  
մի վոչխարի թիակ:

— Խնդրեմ, գցիր, — պատասխանեց տան-  
տերը:

— Իսկ ձեր միսն իմինիս չի՞ ուտի:

— Դե, իհարկե, չի ուտի — ծիծաղելով  
պատասխանեց տանտերը:

Ալգար-Կոսն աննկատելի կերպով վոսկո-  
րը գցեց կաթսայի մեջ:

Յերբ միսը յեփվեց, Ալգար-Կոսն աղա-  
զակեց.

— Ձեր միսը թիակիս վրայի միսը կերել է:

Վրանի տերը նրան փոխարենը մի գառ  
տվեց:

Ալգար-Կոսը մտավ մի հարուստ վրան և  
մնաց այնտեղ գիշերելու: Նրան լավ կերա-  
կրեցին:

Յերբ պառկում եր քնելու, նա տան տի-  
րոջը հարցրեց.

— Կարելի յե՞ քս վոչխարների մեջ իմ  
գառը բաց թողնել:

— Խնդրեմ, բաց թող:

— Իսկ ձեր վոչխարները չէ՞ն ուտի իմ գառը:

— Դե, իհարկե, չէ՞ն ուտի, ծիծաղելով պատասխանեց տան տերը: Իսկ յ՛թե ուտեն, մեկի փոխարեն իննը կտամ:

Ալղար-Կոսը գառը բաց թողեց վոչխարի հոտի մեջ: Գիշերն այդ խորամանկը գառը մորթեց և վոչխարների բերսննն արյունով ներկեց, իսկ պոզերին ելադիքներ փաթաթեց:

Իսկ վաղ առավոտ աղմուկ և հարահրոց բարձրացրեց:

Տան տերն ստիպված յեղավ տալ նրան խոստացած իննը վոչխարը:

Տուն ե քշում վոչխարները Ալղար-Կոսը և ծիծաղում մարդկանց հիմարության վրա:

Ճանապարհին նա տեսավ, վոր մի մարդ յեզներով վար ե անում:

Ալղար-Կոսը մոտենում ե նրան:

Մարդը հարցնում ե.

— Այդ ուր ես գնում:

— Հարսանիք: Յեթե դու ցանկություն ունես նայելու, ինքդ գնա, իսկ յես քո փոխարեն վար կանեմ:

Մարդն ուրախությամբ համաձայնեց և շտապեց հարսանիքը տեսնելու գնալ:

Ալղար-Կոսը յեզների պոչը կտրեց և կիսով չափ հողի մեջ թաղեց, իսկ յեզները քշեց անտառ:

Յերբ տերը վերադարձավ, Ալղար-Կոսը ձեռքը թափ տալով ասաց.

— Թե ինչ ե պատահել, ինքս ել չգիտեմ. սկսեցի յեզները քշել, նրանք գետինը մտան: Յես պառավներից լսել եմ, վոր նման դեպքերում չի կարելի յեզների պոչերից քաշել: Պոչերը կկտրվեն, իսկ յեզները բուրբուկին կաննետանան գետնի տակ:

— Ապա ի՞նչ անել—հարցրեց յեզների տերը:

— Հարկավոր ե գլխի կողմից փորել—պատասխանեց նրան խաբեբան և շտապ հեռացավ:

Տերը փորեց-փորվրեց, մի մեծ փոս փորեց, բայց յեզները չկան ու չկան: Նա բարկացավ և թախով քաշեց պոչերից մեկը: Պոչը գետնից հանեց և հասկացավ, վոր Ալղար-Կոսն իրեն խաբել ե, իսկույն սկսեց հետապնդել նրան, բայց խորամանկն արդեն յեզները շատ հեռու յեր քշել:

Յեկով դաժան ու ցուրտ ձմեռը: Այն-  
պիսի ձմեռ, վոր միայն աղվեսի մորթուց  
պատրաստված մուշտակում մարդ կարող է  
տաք լինել:

Ալգար-Կոսը պատառոտած մուշտակի մեջ  
ամեն որ մըսում էր: Մի անգամ նա գնում  
էր տափաստանով—վտաքերն ու ձեռքերը  
փայտօցել էյին, ամբողջ մարմնով դողում  
էր, քիթը կապտել էր և չէր իմանում այդ  
դրուժյունից ինչպես դուրս գա: Քամին սու-  
լում է, խփում խորամանկի ականջներին:

Տափաստանում վոչ մի տեղ վրանից բար-  
ձրացող մուխ չի յերևում: Իզուր է Ալգար-  
Կոսը մտրակահարում ձիուն, վախ, պառավ  
ձին չի վազում, միայն բաշն է ցնցում և  
նորից դանդաղ է քայլում:

«Վատ ձի, յերկար ճանապար» — գլուխը  
շարժելով ասում է ինքն իրեն Ալգար-Կոսը:  
Դեռ յերկար պետք է գնալ, շան հաջոց չի  
լսվում, տափաստանում յուրդեր չեն յերե-  
վում: Յուրտ է: Բորան: Բուրբուրվին ցրտահար  
կարելի յե լինել:

Հանկարծ նա տեսնում է ինչ վոր մեկը  
գիմացից գալիս է:

Ձիու լավ վաղրից Ալգար-Կոսը գլխի ըն-  
կավ, վոր յեկողը բայ է:

Ալգար-Կոսը արձակեց իր ծակծկված  
մուշտակը, իրեն ուղղեց ձիու վրա և սկսեց  
ուրախ յերգ յերգել:

Ճանապարհորդները հանդիպեցին, տա-  
փաստանի սովորության համաձայն կանգ-  
նեցրին ձիերը և բարևեցին իրար:

Բայը տաք մուշտակի մեջ կուչ էր յեկել:

Ալգար-Կոսը փափախը թեք դրած, փքվել  
էր, կարծես ամառվա տաք ոըը՝ արևի տակ  
նստած լինի:

1753  
40

Միթե դու չես սառել — հարցրեց բայը  
խորամանկին:

— Այդ քո մուշտակի մեջ է ցուրտ, իսկ իմ  
մուշտակի մեջ շատ շոգ է, — պատասխանեց  
Ալգար-Կոսը:

— Այդ ինչպիսի մուշտակ է քո մուշտա-  
կը — զարմանում է հարուստը:

— Միթե չես տեսնում:

— Տեսնում եմ, վոր ազոափները պատա-  
ռոտել են քո մուշտակը և նրա վրա ավելի շատ  
ծակեր կան, քան մորթի, — ծաղրում է բայը:

— Վոչ, քամին մի ծակից մտնում է, մյուսից  
դուրս գալիս: Ահա թե ինչու յես ինձ տաք  
եմ զգում:



49  
«Հարկավոր ե այս հրաշալի մուշտակը՝ րա  
ձեռքից առնել», մտածում ե ինքն իրեն բայր:  
«Այ թե ինչքան տաք կլինեմ, չեթե բայի  
տաք մուշտակը հագնեմ»,—մտածում ե ինքն  
իրեն խորամանկը:

— Ծախիր մուշտակդ ինձ, — առաջարկում ե բայր Ալդար-Կոսին:

— Չեմ ծախի, առանց այս մուշտակի իսկույն կսառչեմ:

— Փոխարենը վերցրու իմ աղվեսի մուշտակը, — ասաց բայր:

— Ալդար-Կոսն այնպես ե ձևացնում, վորպես թե այդ մասին չի ել ուզում լսել, իսկ մի աչքով նայում ե տաք մուշտակին, մյուսովը հրճվում բայի նժույգով:

— Իմ մուշտակը կտամ, վրան ել փող կըտամ, — նորից առաջարկում ե բայր:

— Փողը հարկավոր չե, այ, յեթե ձին՝ ել հետը տաս, այն ժամանակ գուցե թե մտածեմ:

Ուրախացավ բայր, համաձայնեց, հանեց մուշտակը և հանձնեց ձին:

Ալդար-Կոսը հագավ աղվեսի մորթուց մուշտակը, նստեց բայի ձին և քամուց արագ արշավեց:

Հաճելի յեր Ալդար-Կոսի համար անցնել



Ալդար-Կոսը հագավ աղվեսի մորթուց մուշտակը և նստեց բայի ձին:

200  
յուրդից-յուրդ տաք մուշտակը հագին, լավ  
ձին տակին:

Ամեն տեղ նրան հարցնում եյին. 504.

— Քեզ փորտեղից ե աղվեսի մուշտակը և  
արագավազ ձին:

— Յես մի հրաշալի մուշտակ ունեյի՝  
յոթանասուն տեղից ծակ, իննսուն տեղից  
կարկատած...

Յե՛վ մարդկանց ուրախացնելով, Ալգար-  
Կոսը պատմում եր, թե ինչպես ե բայր վեր-  
ցըրել իր կարկատած մուշտակը և նրա փոխա-  
րեն տվել իր աղվեսի մուշտակը:

Ծիծաղում եյին մարդիկ և կում խոով հյու-  
րասիրում խորամանկին:

Յերբ ծիծաղը զագարում եր, ամեն ան-  
գամ Ալգար-Կոսը կրկնում եր.

Յերկար ե ճանապարհը թե կարճ՝ կիմանա  
նա, ով կանցնի այդ ճանապարհը:

Դառը կերակուրն ել անուշ կերակրից կը-  
տարբերի նա, ով կուտի:



<< Ազգային գրադարան



NL0403089

13773